Ազգային խորհրդատվական խմբի 2ռդ ժողով (ԱԽԽ) և Երկրի նկարագրի նախագծի ներկայացում
17-19 նոյեմբեր, 2015, Երևան, Հայաստան

Ժողովի հաշվետվություն

1. Ողջույնի խոսք և ներածություն

Բացելով միջոցառումը, Եվրամիության կողմից ֆինանսավորվող PPRD East 2 ծրագրի թիմի ղեկավար (ԹՂ) պարոն Սերգեյ Անագնոստին ողջունեց 2-րդ ԱԽԽ մասնակիցներին՝ հետևյալ օրերի ընթացքում Երկրի նկարագրի (ԵՆ) նախագծային փաստաթղթի ակտիվ և արդյունավետ քննարկման ակնկալիքով:
Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության /ՏԿԱԻՆ/ անունից, Հայաստանի Փրկարար ծառայության պետի տեղակալ՝ պարոն Նիկոլայ Գրիգորյանն իր բացման խոսքում շեշտեց տարբեր միջոցառումների կարևորությունը, որոնք իրականացվել են Ծրագրի ընթացքում, միտված այն աշխատանքին, որ ծառայում է ավելի կայուն և աղետակայուն գործընկեր երկրներ (ԳԵ) ունենալու նպատակին:
Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար, պարոն Հոա-Բինի Աճեմյանը, շնորհակալություն հայտնեց հանդիպման կազմակերպիչներին: Նա նշեց, որ ԵՄ-ն աջակցում է Հայաստանին 200 տարբեր նախագծերի միջոցով, և այդ աջակցությունը կազմում է շուրջ 1 մլն. Եվրո ամեն շաբաթ, և այդ աջակցությունը համահունչ է ԵՄ արժեքներին, քանի որ աղետների կանխարգելումը համարվում է շատ կարևոր է, և դա է պատճառը, որ ԵՄ-ն աջակցում է Հայաստանին և մյուս հարևան երկրներին:
Բոլոր մասնակիցների ներկայանալուց հետո, համաձայնվեցին, որ ծրագրի փորձագետները կներկայացնեն , թե ինչ է իրականացվել և ինչ ձեռքբերումներ են եղել 2015 թ ընթացքում PPRD East 2 ծրագրի շրջանակներում: Այնուհետև, բոլորը կքննարկեն ԵՆ, որը նախկինում արդեն ուսումնասիրվել և մեկնաբանվել է հայկական շահագրգիռ կողմերի կողմից: Այդ թվում՝ կքննարկվեն ճանապարհային քարտեզները, որոնք ԵՆ յուրաքանչյուր թեմայի մասն են կազմում, այնուհետև, որպես ամփոփում, Հայաստանի իրավասու մարմինների կողմից կքննարկվեն և կսահմանվեն երկրի առաջնահերթությունները, որպեսզի դրանք իրականացվեն PPRD East 2 ծրագրի ընթացքում :
Ծրագրի ազգային համակարգող /ԾԱՀ/ պ-ն Հովհաննես Եմիշյանի առաջարկով, որոշվեց մասնակիցներին տրամադրել ԵՆ փաստաթղթի տպագիր 20 օրինակներ, ինչը հաջորդ օրվա քննարկման համար կհեշտացնի կողմնորոշումը փաստաթղթում, և հնարավորություն կտա աշխատել ամբողջ քննարկմանը համընթաց:
Պ-ն Անագնոստին ներկայացրեց ԵՀԳԳ քաղաքականությունը և գործընկեր երկրներին աջակցելու նպատակները, շեշտադրելով կարևորագույն սկզբունքներից մեկը՝ ինչքան ավելի շատ են առաջադիմում գործընկեր երկրները, այնքան ավելի մեծ աջակցություն են դրանք ստանում: Նա նաև ընդգծեց, որ PPRD East 2 աշխատում է ազգային ռազմավարական քաղաքականության մակարդակում, ԱՌԿ/ԱՌՆ ոլորտում կենտրոնանալով բնակչության պաշտպանության աշխատանքներն ուղղակիորեն իրականացնող հաստատությունների կարողությունների զարգացմանը: Պարոն Անագնոստին շնորհակալություն հայտնեց պարոն Եմիշյանին՝ աշխատանքային գործընթացի ուղղորդմանն աջակցելու համար: Նա նշեց կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, սեմինարների ու վարժանքների հաջող իրականացումը, որոնք տեղի են ունեցել մինչ օրս: Նաև, շնորհակալություն հայտնեց ՏԿԱԻՆ-ին և պարոն Նիկոլայ Գրիգորյանին՝ դեկտեմբերի 15-16-ին կայանալիք 3րդ ԱՌՆ միջազգային կոնֆերանսին հրավերի համար, և տեղեկացրեց, որ PPRD East 2 անունից միջոցառմանը կմասնակցի պարոն Անտոնին Պետրը: Պարոն Անագնոստին ներկայացրեց նաև որոշ միջոցառումներ, որոնք նախատեսվում է, որ տեղի կունենան 2016 թ. տարվա սկզբին:

2. **Գործողությունների ոլորտ A-ի ներկայացում**

Աղետների հետևանքով կորուստների տվյալների գծով փորձագետ պարոն Մարկո Մասսաբոն ներկայացրեց գործունեության ոլորտ A-ն, որի նպատակն է՝ բարելավել ԱՌԿ իրավական / ինստիտուցիոնալ շրջանակը; ԵՄ Հեղեղումների Դիրեկտիվը և երկրի կողմից դրան մոտարկման մակարդակը; ապա անդրադարձավ գործունեության C1 ոլորտին՝ ERRA-ին և C2-ին՝ աղետի հետևանքով կորուստներին:

Արձագանքելով ԾԱՀ-ի ERRA-ի /Տարածաշրջանային ռիսկերի էլեկտրոնային ատլաս/ զարգացման առաջընթացի հետ կապված մտահոգությանը, պարոն Անագնոստին տեղեկացրեց, որ ERRA-ի վերաբերյալ զեկույցը բացահայտեց շատ թերություններ, որոնք պետք է շտկվեին՝ լիովին գործող համակարգ ունենալու համար, նշելով, որ հաջորդող քայլերն ու առաջարկությունները կներկայացվեն ERRA-ի թեմայով համապատասխան նիստի ժամանակ:

3. **Գործողությունների ոլորտ B-ի ներկայացում**

Բնակչության պաշտպանության /ԲՊ/ գծով փորձագետ՝ պարոն Մայքլ Էլմքվիսթը ներկայացրեց գործունեության ոլորտ B և ձեռքբերումները 2015թ. ընթացքում:
Պ-ն Եմիշյանը խորհուրդ տվեց 2017թ. զորավարժություններն իրականացնել INSARAG թիմերի մասնակցությամբ: Պարոն Անագնոստին պատասխանեց, որ միջազգային զորավարժությունների պարագայում կարևոր է կիրառել ԵՄ ԲՊ մոդուլի մեխանիզմը: Նա ընդգծեց, որ Հայաստանը միակ երկիրն էր, որը PPRD East 2 դասընթացներին մասնակցության առումով առաջնորդվեց 50/50 մասնակցության սկզբունքով:

4. **Գործողությունների ոլորտ C -ի ներկայացում**

Աղետների հետևանքով կորուստների տվյալների (ԱԿՏ) գծով փորձագետ Մարկո Մասսաբոն ներկայացրեց գործունեության ոլորտ C, որը բաղկացած է երկու բաղադրիչներից, առաջին հերթին՝ տարածաշրջանային ռիսկերի էլեկտրոնային ատլասը (ERRA), գործիք, որն ապահովում է տվյալների վիզուալիզացիան; ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության, որը պետք է հավաքագրվի ազգային մարմինների կողմից, և այլ նախաձեռնությունների մասին; երկրորդ հերթին՝ հատկապես անդրադարձավ աղետների հետևանքով կորուստների տվյալների բազային (աղետների վնասների տվյալների ցուցանիշը Սենդայի շրջանակային գործողությունների առանցքային կետն է):
Նա տեղեկացրեց, որ կազմվել է ERRA տեղակայման ձեռնարկ: Քանի որ ծրագրային փաթեթը մշակվել էր մեկ այլ ընկերության կողմից, համակարգի լիարժեք վերահսկողություն ապահովելը հեշտ չէր: Հաջորդ քայլը կլինի վիրտուալ սերվերից տեղափոխվելը ՏԿԱԻՆ ֆիզիկական սերվերի: ERRA տեղակայման հարցում լիարժեք աջակցություն կապահովվի հեռակա կարգով: Նա համաձայնեց, որ ERRA-ի գծով դասընթացներ պետք է ներառվեն ԵՆ ճանապարհային քարտեզի առաջարկություններում:
Պ-ն Անտոնին Պետրը, Կարողությունների զարգացման գծով փորձագետը տեղեկացրեց Կոպեռնիկուս համակարգի մասին, որը թույլ է տալիս ստանալ արբանյակային պատկերներ և աղետի տարածքների քարտեզներ, և որ բոլոր ծառայություններն անվճար են: Համակարգն ակտիվացնելու համար և արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգման կենտրոնի (ԱԻԱՀԿ) արդյունքներից օգտվելու համար պետք է պաշտոնական դիմում ներկայացվի կամ ԵՄ պատվիրակության միջոցով կամ Բրյուսելում գտնվող ԱԻԱՀԿ-ից, այդ ծառայությունն օգտագործելու թույլտվություն ստանալու համար: Ծրագիրն առաջարկեց աջակցություն՝ անհրաժեշտության դեպքում ծառայությունն ակտիվացնելու համար:
Պարոն Անագնոստին պարզաբանեց, որ հենց որ Հայաստանը ճանաչի ERRAն որպես ազգային գերակայություն, գործողությունների պլանում կընդգրկվի տեղական մասնագետների համար ուսուցում՝ կախված ֆինանսավորման առկայությունից:
Պ-ն Վլադիմիր Ավետյանը, /ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունից/ հարցրեց, արդյոք հնարավոր կլինի օգտագործել առաջարկվող համակարգը գյուղատնտեսության ոլորտում

ցրտահարման, կարկտահարման, հրդեհների և այլնի հետևանքով կորուստների գնահատման համար:
Պարոն Մասսաբոն պատասխանեց, որ հիմնվելով առաջարկությունների վերլուծության վրա, պետք է մշակել և ընդունել մեթոդաբանություն՝ տարբեր ոլորտներում, այդ թվում և գյուղատնտեսության մեջ աղետներից տնտեսական կորուստները գնահատելու համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի /ՀՀ ԳԱԱ ԵԳԻ/ ներկայացուցչի այն հարցին, թե արդյոք ERRAն, որ նախկինում տեղադրված էր և աշխատում էր ինստիտուտի սերվերի վրա նույնպես կթարմացվի թույլ տալով, որ համակարգն աշխատի առանց խաթարումների, պարոն Անագնոստին պատասխանեց, որ ERRAն կարող է վերատեղակայվել ինստիտուտում նույնպես: Ընդհանուր առմամբ, լիարժեք գործող ERRA ունենալու համար, ERRA համակարգի վերազինումը նախատեսվում է իրականացնել մինչև 2017թ. : Ամեն երկու տարին մեկ, Բրյուսելում տեղի է ունենում բնակչության պաշտպանության Ֆորում, և մինչև 2017 թ. լիարժեք գործող և լրամշակված ERRA համակարգը պատրաստ կլինի այդ Ֆորումում ներկայացնելու համար:
Որոշվեց, որ պարոն Մասսաբոն տեղում համակարգողի աջակցությամբ հանդիպում կունենա ՏԿԱԻՆ Ճգնաժամային կառավարման կենտրոնի /ՃԿԿ/ SS փորձագետների հետ՝ ERRA իրականացման տեխնիկական խնդիրները քննարկելու նպատակով: Հանդիպումը տեղի ունեցավ նոյեմբերի 19-ի առավոտյան, որի ժամանակ և պարզաբանվեցին ERRA տեղակայման հաջորդ քայլերը և ընթացակարգերը:

5. Գործողությունների D ոլորտի ներկայացում

Անտոնին Պետրը, Կարողությունների զարգացման առանցքային փորձագետը ներկայացրեց, թե ինչ ձեռքբերումներ են եղել և ինչ է իրականացվել Գործողությունների ոլորտ D շրջանակներում՝ աղետների մասին իրազեկության բարձրացման ուղղությամբ 2015 թվականին: Այդ թվում նշեց կարճ գնահատման առաքելությունները ԳԵ-ում, սակայն պրն Պետրը ընդգծեց, որ տեխնիկական պատճառներով գնահատող թիմը չի կարողացել անդրադառնալ աղետների մասին հանրային իրազեկման ոլորտին բոլոր վեց երկրներում, այդ իսկ պատճառով, հարցաշար է մշակվել և տարածվել բոլոր Գործընկեր երկրներում:

Հարցաշարն ուղղված էր հետևյալ հիմնական ոլորտներին.
A. Հաղորդակցության ազգային ռազմավարություն/քաղաքականություն
B. Իրազեկության բարձրացմանն ուղղված առկա միջոցառումները դպրոցների մակարդակում
C. PPRD East Լրագրողների ցանցի գնահատում
D. Փոխգործակցություն այլ դերակատարների հետ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում աղետների ռիսկերի կառավարման իրազեկության բարձրացման ասպարեզում
E. Աղետների ռիսկերի կառավարման ազգային իրազեկման արշավներ

Ի լրումն, նա նշեց, որ Ծրագրի 1-ին փուլում ստեղծված Լրագրողների ցանցը գնահատվել և վերագործարկվել է: Գնահատումը կատարվել է ԼՑ հարցաշարի միջոցով, որով հարցվել էին ցանցի բոլոր անդամները: Հարցաշարը կենտրոնացած էր հետևյալ ուղղությամբ.

- PPRD East 1-ի հետ աշխատելու փորձը
- ԱՌՆ և ԱՌԿ ոլորտներում աշխատելու փորձը
- Ազգային և/կամ PPRD East 1-ի Հաղորդակցության ռազմավարության/քաղաքականության մշակման փորձը
- PPRD East 2-ի հետ աշխատանքները շարունակելու պատրաստակամությունը
- ԼՑ անդամներից ակնկալվեցին հետագա գործունեության համար գաղափարներ/ առաջարկություններ

ԼՑ ընդհանուր 37 անդամներից 5-ը Հայաստանից են:

Պարոն Անագնոստին տեղեկացրեց, որ սկզբունքային մոտեցումներից մեկը, որը համաձայնեցված է «DIPECHO Հարավային Կովկաս»-ի հետ, այն է, որ ինչ մեթոդաբանություն որ կիրառվում է Աղետների ռիսկի գնահատման համար երկրում DIPECHO-ի գործընկերների կողմից, որոնք

աշխատում են համայնքային ներքևից-վերև մակարդակում, նույն մեթոդաբանությունը կկիրարկվի վերևից ներքև մակարդակում:

Պարոն Գրիգորյանը հանդես եկավ դիտողությամբ, որ ցանկալի է ոչ միայն PPRD East 2 թիմը գործողություններ իրականացնի PPRD East ծրագրի 2-րդ փուլի ընթացքում, այլ որ հանրային իրազեկման գործունեությունը իրականացվի նաև երկրների կողմից տեղում: Նա տեղեկացրեց, որ Սենդայ հանրային իրազեկման նիստի ժամանակ որոշվել է /որը նա է վարել/, թե ինչպես կարելի է գրավել լրագրողներին դեպի ԱՌՆ ոլորտ: Երևանում կայանալիք 3-րդ միջազգային ԱՌՆ կոնֆերանսի արդյունքում Աշխատանքային խումբ կստեղծվի, որը կաշխատի Սենդայի շրջանակի առաջիկա 15 տարիների ընթացքում:
Նա առաջարկեց բոլոր զարգացումները դիտարկել Սենդային համահունչ, և դրանք ներառել PPRD East 2 ծրագրի աշխատանքային պլանում; ինչպիսիք են, օրինակ, ԲՊ իշխանությունների կարողությունների զարգացումը հանրային իրազեկման ոլորտում, և բնակչության նպատակային խմբերի իրազեկության բարձրացումը: Նա ընդգծեց որոշակի միջոցառումների ծրագրի մշակման անհրաժեշտությունը, որոնք ընդհանուր կարևոր ու առաջնային կլինեն բոլոր վեց երկրների համար, այդ գործողությունների ուղղությամբ մոտիվացված աշխատելու և արդյունքի հասնելուն ընդառաջ:
Նա նաև տեղեկացրեց, որ Ազգային հաղորդակցության ռազմավարության մշակումը գրեթե ավարտված է, և որ ավելի շուտ ակնկալվում է, որ ծրագրի և ԵՄ փորձագետները կվավերացնեն Ազգային ռազմավարությունը և կհաստատեն, թե արդյոք դա իրոք համապատասխանում է ԵՄ ուղեցույցներին:

6. Գործողությունների E ոլորտի ներկայացում

Պարոն Դավիդե Միոցցոն, Աղետների ռիսկերի կառավարման փորձագետը, ներկայացրեց գործունեության ոլորտ E, որը կենտրոնանալով բնակչության պաշտպանության և ԱՌԿ ոլորտում կամավորական համակարգի վրա: Նշվեց, որ ՏԿԱԻՆ-ը աշխատում է Հայաստանում կամավորական խմբերի մեկ ռեեստրի ստեղծման ուղղությամբ:
Պարոն Անագնոստին տեղեկացրեց, որ PPRD East 2 Ազգային համակարգողները ճանաչվել են DG ECHO-ի կողմից որպես վերապատրաստման գծով Ազգային համակարգողներ, ինչը նշանակում է, որ պարոն Եմիշյանը պետք է վավերացնի փորձագետների փոխանակմանը մասնակցելու համար առաջադրված մասնագետների գրանցումը:
ԹՂ խոստացավ Փորձագետների փոխանակման ծրագրի (DG ECHO ֆինանսավորմամբ) վերաբերյալ տեղեկատվություն ուղարկել, մանրամասն տվյալներով, թե որքան տեղեր/ քվոտաներ են հատկացվում յուրաքանչյուր երկրին: ԾԱՀ խնդրեց լիազորել PPRD East 2-ի Տեղական համակարգողին՝ աջակցություն ցուցաբերել փորձագետների փոխանակման ծրագրին մասնակցության հայտերի կազմման աշխատանքներում:

7. Երկրի նկարագրի փաստաթղթի ներկայացում

Պարոն Էլմքվիսթը ներկայացրեց Հայաստանի Բնաչության պաշտպանության նկարագիրը: Նա պարզաբանեց, որ մինչդեռ ՏԿԱԻՆ-ը ունի մի շարք այլ գործառույթներ, բայց Երկրի նկարագիրը կենտրոնանում է Բնակչության պաշտպանության ոլորտի ուղղությամբ:
Պ-ն Եմիշյանը պարզաբանեց, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունը հիմնադրվել է 2008 թ., իսկ ՀՀ Տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարությունները միավորվել են 2014 թ., ուստի՝ դա պետք է արտացոլվի Երկրի նկարագրում: Փրկարար ծառայությունը չունի պետական մարմնի կարգավիճակ:
Նա նաև պարզաբանեց, որ աշխատանքներ կիրականացվեն՝ մինչև 2017 թ. կենտրոնացված ահազանգման/ազդանշանային համակարգ ունենալու ուղությամբ; սակայն, կան տեղական նախազգուշացման համակարգեր, որոնք տեղակայված են ջրամբարների, Հայկական Ատոմակայանի կողքին: Այսպիսով, չնայած, որ առկա են տեղական համակարգեր, բայց բացակայում է կենտրոնացված համակարգ, որը կհամակարգվեր ՃԿԿ-ի կողմից:

8. Առաջընթացը՝ PPRD East ծրագրի փուլ 1-ի շրջանակներում մշակված առաջարկությունների ընդունման գործում

Դավիդե Միոցցոն խոսեց PPRD ծրագրի1-ին փուլի առաջարկությունների ընդունման վերաբերյալ:
Պարոն Եմիշյանը նախանշեց առաջնային ոլորտները. կամավորությամբ զբաղվելու մարդկանց խրախուսում; Հայաստանի նման եվրոպական երկրի մոդելից դասերի քաղում: Նա տեղեկացրեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, եթե մարդը չունի որոշակի կոնկրետ որակավորում, նրան չի թույլատրվում կատարել փրկարարական աշխատանքներ, և միայն կարող են ներգրավվել այդպիսի աշխատանքներում, եթե կան հրահանգիչներ, ովքեր կաջակցեն և համակարգեն նրանց գործողությունները:
Պարոն Աշոտ Մնացականյանը, Սեյսմիկ պաշտպանության ծառայությունից, մեկնաբանեց, որ սեյսմիկ իրավիճակի և ռիսկերի հետ կապված փրկարար ծառայությունից արձագանքը վկայում է, որ բոլոր բարձրացված հարցերը նույնն են, ինչ Եվրոպայում; սակայն, ֆինանսական սահմանափակումները խոչընդոտում են բարելավմանը: Երկրի մակարդակում ամենակարևոր ռիսկը երկրաշարժն է, այլ ոչ հեղեղները, այդ իսկ պատճառով, դրան պետք է ավելի մանրամասն անդրադառնալ ԵՆ-ում:
Պարոն Եմիշյանը տեղեկացրեց, որ թեև SEVESO Դիրեկտիվը չի վավերացվել Հայաստանում, սակայն, ՄԱԿ-ի անդրսահմանային աղետների կոնվենցիան ընդունվել է Հայաստանում, ըստ որի, բոլոր խնդիրները բաշխվել են նախարարությունների միջև: Քիմիական աղետի դեպքում բնակչության պաշտպանության պլանը հաստատվել է 2011 թ-ին, կառավարության թիվ 861 հրամանով: Ինչ վերաբերում է Հեղեղումների Դիրեկտիվին, Գյուղատնտեսության նախարարությունը սահմանվել է որպես ջրհեղեղների կանխարգելման ոլորտում պետական լիազորված մարմին: Հեղեղումների կանխարգելման բոլոր պլանները սահմանված են մարզային մակարդակում: Ազգային մակարդակում ունենք ծրագրեր նախատեսված քիմիական աղետի, Ատոմակայանի (ՀԱԷԿ) աղետի, և երկրաշարժի դեպքի համար:
Պարոն Եմիշյանը նշեց, որ նախորդ ԱՌՆ ռազմավարությունը հիմնված էր Հյոգոյի գործողությունների շրջանակի վրա, իսկ այժմ՝ Սենդայիի նոր, վերանայված առաջնահերթությունների պարագայում, Ազգային ԱՌՆ ռազմավարությունը կվերանայվի համապատասխանաբար, որպեսզի պատրաստ լինի 2016 թ. ավարտին., թեև համաձայն Սենդայիի՝ երկրները պետք է ռազմավարություն ունենան մինչև 2020 թ.
Դավիդե Միոցցոն խնդրեց, որպեսզի ՏԿԱԻՆ-ը տրամադրի առնվազն մշակված փաստաթղթի նախագիծը, որպեսզի հանձնարարագրերը մշակվեն ճիշտ եզրակացությունների հիման վրա:
Պարոն Եմիշյանը հայտնեց, որ ԱՌՆ Ազգային պլատֆորմը հիմնադրամ է Հայաստանում: ԱՌՆ գծով պետական պատասխանատու մարմինը ՏԿԱԻՆ-ն է, բացի այդ, կա Պլատֆորմը: Եվ դա ոչ ստանդարտ մոտեցում է, երբ պետական, միջազգային և հասարակական կողմերն ունեն ընդհանուր քննարկումների մեկ հարթակ:
Պարոն Անագնոստին ընդգծեց, որ Ազգային պլատֆորմը պետք է քաշ և դիրք ունենա ներգործելու ԲՊ համակարգի վրա, ուստի այն պետք է լինի ԱՌԿ համակարգի մի մասը: Այս առումով, Հայաստանի պլատֆորմը PPRD գործընկեր երկրների համար մի վառ օրինակ է:
Պարոն Արա Բարսեղյանը, ARNAP հիմնադրամի /ԱՌՆ Ազգային պլատֆորմ/ տնօրենի տեղակալը մեկնաբանեց, որ մի կողմից՝ Պլատֆորմն աշխատում է ՏԿԱԻՆ համակարգից դուրս, իսկ մյուս կողմից՝ Պլատֆորմի Խորհրդի անդամները բոլոր նախարարություններից փոխնախարարներն են: Այնպես որ, Պլատֆորմը նպաստում է, որ հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների ձայնը լսելի լինի նախարարություններում: Սա առավել արժեքավոր մեխանիզմն է:
Պլատֆորմի ֆինանսավորումը ապահովելու հանձնարարագիրը շատ կարևոր է, քանի որ, հակառակ դեպքում, շատ ժամանակ է ծախսվում է միջոցներ հայթայթելու վրա, ԱՌՆ ուղղությամբ աշխատելու փոխարեն:
Պ-ն Լևոն Ազիզյանը /Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի ծառայություն/, տեղեկացրեց, որ ներկայումս 47 օդերևութաբանական մոնիտորինգի կայաններից ընդամենը 10-ն են ավտոմատացված, միջդեռ, ըստ համաշխարհային օդերևութաբանության կազմակերպության, մեխանիկական դիտարկումներ ևս պետք է կատարվեն՝ տվյալների ճշգրտությունը ստուգելու համար:
Կա լուրջ խնդիր հիդրոլոգիական տվյալների հետ կապված, հատկապես ջրհեղեղների վերաբերյալ:
Պարոն Անագնոստին նշեց, որ Աղետների ռիսկի մանրակրկիտ գնահատման կարիք կա, և հավաստիացրեց, որ այս հաղորդագրությունը կփոխանցվի ԵՄ-ին Բրյուսելում:

Ինչ վերաբերում է անտառային հրդեհների հարցերին, Դավիդ Միոցցոն խնդրեց մասնակիցներին՝ իրեն ուղարկել բավարար տվյալներ, որպեսզի անհրաժեշտ փոփոխություններ կատարի ԵՆ-ում:
Պ-ն Եմիշյանը հետաքրքրվեց Mike 11 կանխատեսման ծրագրային ապահովման փաթեթի տրամադրման կարգավիճակի մասին: Պարոն Անագնոստին բացատրեց, որ նման գնումները պետք է արդարացված լինեն ԵՄ-ն առջև, և հենց որ ՏԿԱԻՆ-ը հստակ սահմանի նպատակները՝ գնման հայտն անմիջապես կուղարկվի ԵՄ:
Պ-ն Արա Բարսեղյանն առաջարկեց ԵՆ-ում ավելացնել Հանրակրթական դպրոցների սեյսմիկ հզորացման 2015-2020-ի ծրագրի վերաբերյալ2015թ. հուլիսին ընդունված օրենքը: Օրենքը նշում է, որ դպրոցներում սեյսմիկ գնահատում է կատարվել և 2015-20թթ. համար որոշակի 377 առաջնային դպրոցներ են հայտնաբերվել: 617 մլն ԱՄՆ դոլարի ներդրում է անհրաժեշտ: Բոլոր դպրոցների համար պահանջվող գումարը կկազմի ավելի քան 1 մլրդ:

9. Ջրհեղեղների կառավարում և մոտարկումը ԵՄ Հեղեղումների Դիրեկտիվին

Պարոն Մասսաբոն ներկայացրեց ջրհեղեղների կառավարումը և մոտարկումը ԵՄ Հեղեղումների հրահանգին: Գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչը մեկնաբանեց, որ Գյուղատնտեսության նախարարությունը կառավարության որոշմամբ ճանաչվել է լիազոր մարմին, որը պատասխանատու է հակահեղեղային միջոցառումների համար: Գյուղ նախարարությունը պետք է առավելապես ներգրավված լինի ռիսկի կանխարգելման միջոցառումների մշակման և դրանց իրականացման գործում:
Ռիսկերին հակված խոցելի գոտիների քարտեզագրումը, ռիսկերի գնահատումն ավելի շատ Հիդրոօդերևութաբանության ծառայության առաջադրանքներն են: Գերակա միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն, սահմանվում են ՏԿԱԻՆ-ն հետ համատեղ, իսկ իրականացումը Գյուղ. նախարարության ուղղակի պարտականությունն է: Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեն (ՋՏՊԿ) ուղղակիորեն աշխատում է ամբարտակների հետ կապված հարցերի ուղղությամբ: Անհրաժեշտություն կա առանձին ներկայացնելու ՋՏՊԿ դերը ԵՆ-ում, ինչպես նաև հստակ արտացոլելու ՀՀ Գյուղատնտեսության նախարարության դերը:
Քննարկումն, այնուհետև, անդրադարձավ ջրավազանային կառավարման պլաններին և համապատասխան պատասխանատու Ջրավազանային կառավարման կազմակերպությունների կառուցվածքին:
Հեղեղների կանխարգելման ոլորտում համակարգման մարմնի բացակայության պատճառով, պարոն Մասսաբոյի առաջարկությունը՝ ունենալ մեկ գետավազանային մարմին, որը ներկայացված կլինի մի քանի նախարարություններով, որոնք պատասխանատու են գետավազանային մակարդակում հեղեղումների կառավարման համար, ընդունելի համարվեց:
Պարոն Հովհաննես Խանգելդյանը, Ճգնաժամային կառավարման կենտրոնի ղեկավար (ՃԿԿ), տեղեկացրեց, որ կառավարության որոշմամբ սահմանվում է, որ մինչև 2015 թ. Ավարտը ամբարտակների անվտանգության բոլոր համակարգերը պետք է միացված լինեն ՃԿԿ-ին:

Հանդիպման երկրորդ օրվա պաշտոնական մասի ավարտից հետո մասնակիցները մնացին և փոքր խմբերով աշխատեցին ծրագրի փորձագետների հետ երկուստեք, հետևյալ հարցերի շուրջ.
1) Գյուղատնտեսության նախարարության ներառումը ԵՆ մեջ
2) Գետավազանային մակարդակում հեղեղումների ռիսկերը կառավարող պատասխանատու կազմակերպության հստակեցում
3) Ճանապարհային քարտեզների ժամկետների հստակեցում

10. Աղետների ռիսկերի գնահատում

Պարոն Մասսաբոն ներկայացրեց Աղետների ռիսկի գնահատման թեման: Ինչ վերաբերում է վտանգի և ռիսկի քարտեզագրմանը, նա խորհուրդ տվեց մշակել ռիսկերի գնահատման մեթոդաբանություն, որը պետք է վավերական լինի մի քանի վտանգների համար: Նա հայտնեց, որ դրա համար հղում են հանդիսանում Աղետների ռիսկի գնահատման ԵՄ ուղեցույցները; և, որ ERRA-ի ցանկալի ֆունկցիոնալությունը պետք է որոշվի համատեղ:

Նա նաև անդրադարձավ ԵՆ Ճանապարհային քարտեզին, որն առաջարկում է փոփոխել ԱՌՆ Ազգային ռազմավարությունը՝ ԱՌԳ-մը ազգային քաղաքականության մեջ ներառելու նպատակով; Ճանապարհային քարտեզը կարող է օգտագործվել որպես դրա համար գործողությունների պլան:
Պարոն Եմիշյանը բացատրեց, որ փոփոխություններ կարող են ներկայացվել միայն աշխատանքային խմբում քննարկումներից հետո, ապա, մինչև կառավարությանը ներկայացնելը՝ Պլատֆորմի միջոցով շրջանառելով:

11. Աղետների հետևանքով կորուստների տվյալների հավաքագրում և մշակում

Պարոն Մասսաբոն ներկայացրեց Աղետների հետևանքով կորստի տվյալների հավաքագրման և մշակման մասին: Պ-ն Վլադիմիր Ավետյանը պարզաբանեց, որ տեղական մարմիններից կազմված հանձնաժողովներն են աշխատում կորուստների տվյալների հավաքագրման ուղղությամբ, այնուհետև, ներկայացնում են համապատասխան Ակտը Գյուղատնտեսության նախարարությանը, որն էլ համախմբում և ներկայացնում է կառավարությանը՝ փոխհատուցման համար: Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրված գույք չկա: Պարոն Մասսաբոն համաձայնեց փոփոխել դա ԵՆ-ում:
Պարոն Եմիշյանը հավելեց, որ բոլոր նախարարությունները ևս ներկայացնում են իրենց կորուստների տվյալները: 2011թ. Կառավարության թիվ 1562 որոշումն է կարգավորում հանձնաժողովների կառուցվածքը համայնքային, մարզային մակարդակում: Այդ հանձնաժողովների եզրակացությունները համարվում են իրավական փաստաթղթեր և կոչվում են «ֆիզիկական և իրավաբանական անձանց կորուստների գնահատում»: Հանձնաժողովները պետք է կազմված լինեն տարբեր ոլորտի փորձագետներից:

12. Աղետների ռիսկերի նվազեցման ներառումը հանրային ծախսերում

Պարոն Պետրը ներկայացրեց Աղետների ռիսկի նվազեցումը հանրային ծախսերում ընդգրկելու թեման: Ի պատասխան այս ներկայացման, պարոն Եմիշյանը պարզաբանեց, որ երկիրը չունի աղետներին նվիրված հատուկ միջոցներ, այնպես որ դրան նախատեսված միակ ռեսուրսն է՝ պետության պահուստային միջոցները, որոնք կարող են հատկացվել կառավարության որոշմամբ: Ինչ վերաբերում է կանխարգելմանը, ջրհեղեղների դեպքում առաջին հերթին ուսումնասիրվում եմ հեղեղումներին առավել հակված գոտիները, ապա Գյուղատնտեսության նախարարությունը ներկայացնում է այդ ուսումնասիրության արդյունքները կառավարությանը, այնուհետև, կառավարությունը հատկացնում է գնահատված միջոցները: Այս գործընթացն աշխատում է 2005 թ-ից սկսած:
Ընդհանուր առմամբ, ազգային շահագրգիռ կողմերը համաձայնեցին, որ յուրաքանչյուր նախարարության բյուջեն ցույց չի տալիս մասնավորապես կանխարգելման նպատակներով ծախսերի բաշխումը, և ոչ էլ առանձին աղետների հետևանքների վերացման համար նախատեսված ծախսերի բաշխումը:

13. Ընդունող երկրի աջակցություն

Պարոն Էլմքվիսթը ներկայացրեց ընդունող երկրի աջակցության վերաբերյալ: Ինչ վերաբերում է շտաբային վարժանքներին, որոնք պետք է կազմակերպվեն Հայաստանում, պարոն Եմիշյանն առաջարկեց, որ ՃԿԿ օպերատիվ կենտրոնի փոխարեն՝ կարող է օգտագործվել Ճգնաժամային կառավարման ակադեմիայի տարածքը:
Պարոն Վլադիմիր Ավետյանը առաջարկեց վերաձևակերպել Գյուղատնտեսության նախարարության գործառույթների և պարտականությունների վերաբերյալ դրույթները՝ որպես մարդասիրական օգնություն ներմուծվող և մատակարարվող սննդամթերքի որակի առումով դրանց հսկողական և կարգավորիչ դերն արտացոլելու համար: Նա պարզաբանեց, որ ուժգին երկրաշարժների ժամանակ գյուղատնտեսության նախարարությունը պատասխանատու է փրկարարական շների դեպի Հայաստանի տարածք ելքի-մուտքի վերաբերյալ հարցերի կարգավորման համար: Նա նաև տեղեկացրեց, որ ուժգին երկրաշարժների ժամանակ բնակչության պաշտպանության նոր պլանի նախագիծը ներկայումս գտնվում է քննարկման փուլում, և առաջարկվել է ազդակիր բնակչությանը և փրկարարական աշխատանքներում ներգրավված անձանց ջրամատակարարման ապահովումը

ներառել որպես Գյուղատնտեսության նախարարության և տեղական իշխանությունների համատեղ գործառույթ:
Առաջարկվեց, ի լրումն օդանավակայանների, ներառել նաև Մեղրի և Բագրատաշեն սահմանային մուտքի կետերը: Պարոն Եմիշյանը պարզաբանեց, որ Պաշտպանության նախարարության հետ համաձայնագրի հիման վրա, որևէ այլ առկա տրանսպորտային հանգույցների օգտագործումը կարգավորվում է և անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրվել:

14. Կամավորությունը Հայաստանի Բնակչության պաշտպանության ոլորտում

Պարոն Միոցցոն ներկայացրեց Կամավորության մասին Հայաստանի Բնակչության պաշտպանության ոլորտում: Քննարկումը վերաբերում էր արտակարգ իրավիճակների դեպքում կամավորների մասնակցությանը: Սակայն, ենթադրվում է, որ կամավորական աշխատանքը պետք է ուղղված լինի նաև կանխարգելմանը և պատրաստվածությանը: Քննարկումն այնուհետև անդրադարձավ դպրոցներում բնակչության պաշտպանության կրթությանը:
ԹՂ տեղեկացրեց, որ կախված թեմայից, որը կընտրվի PPRD East 2 շրջանակներում աշխատելու համար՝ փորձագետների փոխանակումը (կամավորության բնագավառում) համարվում է հնարավոր ուղղություններից մեկը.

15. Աղետների մասին իրազեկության բարձրացում

Պարոն Պետրը եզրակացրեց, որ աղետների մասին իրազեկության բարձրացման ոլորտը լավ է աշխատում Հայաստանում, ինչի մասին կարող են վկայել մի շարք միջոցառումները՝ ԱՌՆ միջազգային կոնֆերանսները, որոնք կազմակերպվում են Հայաստանում 3 տարի անընդմեջ, Արտակարգ ալիքի գործունեությունը, դասընթացներ տրամադրումը, հրապարակումները, և այլն:
Նա նշեց, որ, 2015թ. հուլիսին անցկացված գնահատման արդյունքների համաձայն, Հաղորդակցության ազգային ռազմավարությունը ներկայումս մշակման փուլում է, ուստի, այդ առումով, Ծրագիրը կարող է աջակցել այս գործընթացին ԵՄ գիտելիքների ու փորձի փոխանակմամբ, և ռազմավարության հետագա իրականացման համար համապատասխան գործողությունների պլանի մշակման գործում, կախված իրադրությունից:
Նիկոլայ Գրիգորյանը տեղեկացրեց, որ Ռազմավարությունը բազմակողմանի կքննարկվի ԱՌՆ Պլատֆորմի միջոցով, և հետո կներկայացվի կառավարության հաստատմանը: Կողմերը պայմանավորվեցին, որ երբ նրանք կրկին հանդիպեն դեկտեմբերին, պարոն Գրիգորյանը կներկայացնի Ազգային ռազմավարության նախագիծը՝ դրա շրջանակի և տեսլականի վերաբերյալ պատկերացում կազմելու համար:
Նա նշեց, որ այն Գործողությունների պլանը, որը կմշակվի միջազգային փորձագետների հետ համատեղ կլինի ավելի մրցունակ ու ֆինանսավորում հայթայթելու տեսանկյունից արդյունավետ, սակայն նշեց, որ եթե այն մշակվի առանց ազգային փորձագետների, այն չի կարող կյանքի կոչվել և իրագործվել: Նա նաև առաջարկեց փորձարկել ճգնաժամային հաղորդակցման ընթացակարգերը Հաղորդակցության ռազմավարության մշակմանը զուգընթաց՝ դրանք 2017 թ. հուլիսին կայանալիք 2րդ շտաբային վարժանքների ժամանակ փորձարկելու փոխարեն:

16. Համաշխարհային Բանկի նախաձեռնությունը՝ տեղում հանդիպում

Հենց որ PPRD թիմը տեղեկացավ Համաշխարհային Բանկի ԱՌՆ/ԱՌԿ ոլորտում նոր ծրագրի մասին, ԹՂ խնդրանքով, ԾԱՀ օգնեց կազմակերպել հանդիպում ՀԲ ծրագրի տեղական համակարգող Արա Նազինյանի հետ՝ երկու ծրագրերի միջև պոտենցիալ համագործակցության հնարավորություններ բացահայտելու նպատակով: Թիմը տեղեկացավ, որ այս ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության խնդրանքով, և ներառում է բաղադրիչ, որը միտված է բարելավելու գեո-տարածական տվյալների փոխանակումը աղետների ռիսկերի կառավարման համար ; ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2017թ. տարեվերջ:

Թիմի ղեկավարը, մյուս կողմից, համառոտ ներկայացրեց PPRD East 2 ծրագրի նպատակները և գործողությունները: Պարոն Նազինյանը նշեց ՀԲ համապատասխան աշխատանքի հիմնական ոլորտները, ինչպիսիք են, օրինակ՝ կարողությունների զարգացումը, Սենդայի շրջանակային

ուղղությունը, դպրոցների անվտանգության ծրագիրը, որի նպատակն է՝ ամրապնդել դպրոցների աղետակայունությունը; աջակցություն Քաղաքաշինության նախարարությանը՝ վերանայելու շինարարական նորմերը և նորմերի իրականացման պրակտիկան; ռիսկերի ֆինանսավորման միջոցառումների վերլուծությունը; ավելի աղետակայուն կառույցների ապահովումը՝ կորուստներից խուսափելու համար.
Պարոն Նազինյանը համաձայնեց տրամադրել ծրագրի հայեցակարգը: Այնուհետև, կողմերը համաձայնեցին Համաշխարհային բանկի ծրագրի այլ փորձագետների հետ /որոնք Հայաստանից դուրս են գտնվում/ հետագա հանդիպման հնարավորություն գտնել, հավանաբար, Skype-ով կոնֆերանս- զանգի միջոցով:

17. Տվյալների և տեղեկատվության փոխանակում և INSPIRE Դիրեկտիվը

Պարոն Մասսաբոն ներկայացրեց տվյալների և տեղեկատվության փոխանակման և INSPIRE Դիրեկտիվի թեման: Պարոն Արշավիր Ավագյանը Գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) Երկրաբանական գիտությունների ինստիտուտից (ԵԳԻ) հայտնեց, որ ERRA մշակելիս, իրենք հետամուտ են եղել INSPIRE Դիրեկտիվի պահանջներին: Պետական գույքի կառավարման կադաստրը չի ցանկանում առաջնորդվել INSPIRE Դիրեկտիվի պահանջներով, և տարածական տվյալների բազաները հանրորեն մատչելի չի դարձնում: Այնպես որ, հարցը վերաբերվում է այն բանին, թե ինչպիսի տվյալներ պետք է ներառվեն գեո-տարածական տվյալների բազայում:
Պարոն Մասսաբոն պատասխանեց, որ, քանի որ INSPIRE-ը սահմանում է տարբեր հաստատությունների միջև տվյալների փոխանակման չափանիշներ, այս դեպքում, պետք է սահմանել և/կամ հստակեցնել տվյալների փոխանակման քաղաքականությունը:
Պարոն Եմիշյանը մեկնաբանեց, որ INSPIRE Դիրեկտիվի առաջին իրականացնողը է պետք է լինի ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-նը, Այնուհետև ԳԱԱ ԵԳԻ-տը նույնպես կարող է ընդգրկվել, Պետական կադաստրի հետ մեկտեղ:
Պարոն Եմիշյանը խորհուրդ տվեց կազմակերպել ԵՆ փաստաթղթի շրջանառությունը Արտաքին գործերի նախարարության միջոցով, այնպես, որ բոլոր նախարարությունները պաշտոնապես ստանան փաստաթուղթը ուսումնասիրության համար և տրամադրեն պաշտոնական կարծիք: Թե ինչպես ավելի լավ դա կարելի է կազմակերպել Հայաստանում ընթացակարգային առումով՝ հետագա քննարկման հարց է:

18. Տարածաշրջանային ռիսկերի էլեկտրոնային ատլաս /ERRA/

Հաջորդիվ, ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ներկայացուցիչներ Աննա Էլբակյանը և Ալեքսանդր Առաքելյանը ներկայացրեցին ERRA ծրագիրը, որը տեղադրված է ԵԳԻ-ում 2014 թ-ից, դրա վտանգների/ռիսկերի շերտերը ու աղետների առաջացման հավանականությունը գնահատելու գործիքների հնարավորությունները:

Շեշտվեց, որ մինչ ERRA-ն տարածաշրջանային ատլաս է, և արժեքավոր է իր մեթոդաբանությամբ, և շատ կարևոր է զարգացնել և արդիականացնել ինչպես ERRA-ի ծրագրային ապահովումն, այնպես էլ բովանդակությունը, սակայն երկիրը պետք է ունենա սեփական ռիսկերի ատլասներ՝ հիմնված խորը ուսումնասիրությունների վրա, ինչը պահանջում է շոշափելի ներդրումներ, քանի որ ռիսկերի գնահատման արդյունքային տվյալների որակը ուղղակիորեն կախված է մուտքային տվյալների որակից:
Շատ կարևոր է ունենալ մեկ միասնական ընդհանուր մեթոդաբանություն ERRA զարգացման համաար բոլոր մակարդակներում՝ երկրի, համայնքի, տարածաշրջանի, և այս մոտեցումը պետք է ընդգրկված լինի երկրի ԱՌՆ ռազմավարության մեջ: Ընդհանուր առմամբ, բոլորը համաձայնեցին ERRA ճանապարհային քարտեզի վերաբերյալ:

19. Ազգային գերակայությունների ամփոփում

Եզրափակելով, պարոն Գրիգորյանը և պարոն Անագնոստին շնորհակալություն հայտնեց մասնակիցներին՝ ԵՆ վերլուծությանը և դրա ճանապարհային քարտեզի քննարկումներին բաց, ակտիվ և կառուցողական մասնակցության համար: Պարոն Գրիգորյանը լրացուցիչ շնորհակալություն հայտնեց PPRD East 2 փորձագետներին՝ ԵՆ նախագծի մշակման ուղղությամբ կատարված բարձրակարգ մասնագիտական աշխատանքի համար:

Պարոն Անագնոստին հրավիրեց ազգային շահագրգիռ կողմերին սահմանել և ընտրել, թե քննարկվող թեմաներից որոնք են համարվում առավել կարևոր, տեղին և համապատասխան PPRD East 2 ծրագրի շրջանակներում անդրադառնալու համար: Սահմանափակ ռեսուրսների պատճառով, առաջնահերթությունը կարող է տրվել 3-ից 4 թեմաների: Կարևոր նշանակության այլ թեմաների համար, կարող է տրամադրվել աջակցություն ծրագրերի առաջարկների մշակման հարցում՝ այլ աղբյուրներից ֆինանսավորում ստանալու համար:

Պարոն Եմիշյանը տեղեկացրեց, որ ընդունող երկրի աջակցության հետ կապված հիմնական աղետը Հայաստանում՝ դա երկրաշարժն է: Առկա է ողջ գործընթացը նկարագրող ծրագիր, և կան բավարար ինստիտուցիոնալ կարգավորումներ:

Մանրամասն քննարկումից հետո, ամփոփվեցին Հայաստանի համար հետևյալ առաջնահերթությունները՝ PPRD East 2 շրջանակներում իրականացվելու համար.

1. Աղետների վերաբերյալ իրազեկության բարձրացում
2. Հեղեղումների ռիսկերի կառավարում և մոտարկումը ԵՄ հեղեղումների դիրեկտիվին
3. Աղետների ռիսկերի գնահատում, ERRA և Աղետների հետևանքով կորուստների տվյալներ, արպես երեքը մեկում

Պարոն Եմիշյանը եզրափակեց, որ, չնայած կամավորականությունը առաջնահերթություն է Հայաստանի համար, սակայն, PPRD East 2 ծրագրից ակնկալիքների առումով, այն հավասարապես առաջնահերթ չէ, ինչպես որ վերը նշված 3 թեմաները:

20. Եզրակացություններ և հաջորդ քայլեր

- ԵՄ-ն աջակցում է Հայաստանին 200 տարբեր նախագծերի միջոցով, և այդ աջակցությունը կազմում է շուրջ 1 մլն. Եվրո շաբաթական
- ERRA վերապատրաստումները պետք է ներառվեն ԵՆ Ճանապարհային քարտեզի հանձնարարագրերի մեջ
- ERRA կարող է վերատեղակայվել ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում նույնպես
- Մինչև 2017 թ. ավարտը լիարժեք գործող և լրամշակված ERRA համակարգը պատրաստ կլինի Բրյուսելում ԲՊ Ֆորումում ներկայացնելու համար
- ERRA տեղակայման ընթացակարգերի վերաբերյալ հանդիպումը ՏԿԱԻՆ Ճգնաժամային կառավարման կենտրոնի /ՃԿԿ/ ՏՏ փորձագետների հետ տեղի ունեցավ նոյեմբերի 19-ի առավոտյան
- Բոլոր ծրագրային զարգացումները պետք է դիտարկել և իրականացնել 2015-2030 Սենդայի ԱՌՆ շրջանակին համահունչ, և դրանք ներառել PPRD East 2 ծրագրի աշխատանքային պլանում
- PPRD East 2 Ազգային համակարգողները ճանաչվել են DG ECHO-ի կողմից որպես վերապատրաստման գծով Ազգային համակարգողներ
- Երկրի մակարդակում ամենակարևոր ռիսկը երկրաշարժն է
- ՄԱԿ-ի անդրսահմանային աղետների կոնվենցիան ընդունվել է Հայաստանում
- Գյուղատնտեսության նախարարությունը հեղեղումների կանխարգելման ոլորտի լիազոր մարմինն է: Հեղեղումների կանխարգելման պլանները սահմանված են մարզային մակարդակում
- Ազգային ԱՌՆ ռազմավարությունը կվերանայվի 2015-2030 Սենդայի ԱՌՆ շրջանակին համապատասխան, որպեսզի պատրաստ լինի 2016 թ. ավարտին

- Անհրաժեշտ է փոխանցել ԵՄ-նը Բրյուսելում այն հաղորդագրությունը, որ Աղետների ռիսկի մանրակրկիտ գնահատման կարիք կա
- Հենց որ ՏԿԱԻՆ-ը հստակ սահմանի MIKE 11-ի օգտագործման նպատակները՝ գնման հայտն անմիջապես կուղարկվի ԵՄ:
- Անհրաժեշտություն կա առանձին ներկայացնելու ՋՏՊԿ դերը ԵՆ-ում, ինչպես նաև հստակ արտացոլելու ՀՀ Գյուղատնտեսության նախարարության դերը:
- Կառավարության որոշումը սահմանում է, որ մինչև 2015 թ. ավարտը ամբարտակների բոլոր անվտանգության համակարգերը պետք է միացված լինեն ՃԿԿ-ին
- Կորուստների տվյալների հավաքագրումը տեղական մարմիններից կազմված հանձնաժողովների առաջադրանքն է
- Ճգնաժամային կառավարման ակադեմիայի տարածքը կարող է օգտագործվել Հայաստանում շտաբային վարժանքներն անցկացնելու համար
- PPRD East 2 շրջանակներում աշխատելու համար ընտրված թեմաների հետ կապված՝ փորձագետների փոխանակումը համարվում է հնարավոր ուղղություններից մեկը
- Հաղորդակցության ազգային ռազմավարութան նախագիծը մշակման փուլում է: Պահանջվում է ԵՄ փորձագիտական կարծիքը՝ Ռազմավարությունը գնահատելու և վավերացնելու համար:
- Ծրագրի թիմը պետք է հանդիպի Համաշխարհային բանկի նախաձեռնության փորձագետների հետ
- Պետք է սահմանել և/կամ հստակեցնել տվյալների փոխանակման քաղաքականությունը Հայաստանում /INSPIRE Դիրեկտիվ/
- INSPIRE Դիրեկտիվի առաջին իրականացնողը պետք է լինի ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ
- Խորհուրդ է տրվում կազմակերպել ԵՆ փաստաթղթի շրջանառությունը ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջոցով
- Երկիրը կարիք ունի սեփական ռիսկերի ատլասների, որոնք հիմնված կլինեն խորը ուսումնասիրությունների վրա
- ERRA զարգացման համար բոլոր մակարդակներում մեկ միասնական ընդհանուր մեթոդաբանության այս մոտեցումը պետք է ընդգրկված լինի երկրի ԱՌՆ ռազմավարության մեջ
- PPRD East 2 շրջանակներում իրականացվելիք, Հայաստանի համար սահմանված առաջնահերթություններն են.

1. Աղետների վերաբերյալ իրազեկության բարձրացում
2. Հեղեղումների ռիսկերի կառավարում և մոտարկումը ԵՄ հեղեղումների դիրեկտիվին
3. Աղետների ռիսկերի գնահատում, ERRA և Աղետների հետևանքով կորուստների տվյալներ, արպես երեքը մեկում

Հավելվածների ցանկ

Հավելված 1 – Օրակարգ

Հավելված 2 – Մասնակիցների ցուցակ

Հավելված 1 – Օրակարգ

Ազգային խորհրդատվական խմբի 2ոդ ժողով և Երկրի նկարագրի նախագծի ներկայացում

17-19 նոյեմբերի, 2015

ՕՐԱԿԱՐԳ

Օր 1ին – 17 նոյեմբերի, 2015

10:00-10:30	Գրանցում	
10:30-10:45	Պաշտոնական բացում	ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ԵՄ պատվիրակություն
10:45-11:00	Ողջույնի խոսք և մասնակիցների ներկայացում	PPRD East 2 Թիմի ղեկավար Լիագումար նիստ
11:00-11:15	2015թ. PPRD East 2 Ծրագրի գործողությունների և ձեռքբերումների համառոտ ակնարկ	Թիմի ղեկավար
11:15-11:45	Գործողությունների A ոլորտի 2015թ. միջոցառումների և ձեռքբերումների ներկայացում	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
11:45-12:15	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
12:15-12:30	Սուրճի ընդմիջում	
12:30-13:00	Գործողությունների B ոլորտի 2015թ. միջոցառումների և ձեռքբերումների ներկայացում	Բնակչության պաշտպանության առանցքային փորձագետ
13:00-13:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
13:30-14:30	Ճաշ	
14:30-15:00	Գործողությունների C ոլորտի 2015թ. միջոցառումների և ձեռքբերումների ներկայացում	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
15:00-15:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
15:30-16:00	Գործողությունների D ոլորտի 2015թ. միջոցառումների և ձեռքբերումների ներկայացում	Կարողությունների զարգացման առանցքային փորձագետ
16:00-16:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
16:30-16:45	Սուրճի ընդմիջում	
16:45-17:15	Գործողությունների E ոլորտի 2015թ. միջոցառումների և ձեռքբերումների	Աղետների ռիսկերի կառավարման փորձագետ

	ներկայացում	Թիմի ղեկավար
17:15-17:45	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
17:45-18:00	1-ին Օրվա եզրափակում	Թիմի ղեկավար ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ԵՄ պատվիրակություն

Օր 2ոդ – 18 նոյեմբերի, 2015

10:00-10:15	1ին օրվա ամփոփում և ծանոթացում 2րդ օրվան	Թիմի ղեկավար
10:15-10:30	Թարմացված Երկրի նկարագրի համառոտ ակնարկ՝ նպատակը, մեթոդաբանությունը և արդյունքները	Թիմի ղեկավար
10:30-11:00	Հայաստանի Բնակչության պաշտպանության նկարագիրը	Բնակչության պաշտպանության առանցքային փորձագետ
11:00-11:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
11:30-11:45	Սուրճի ընդմիջում	
11:45-12:15	Առաջընթացը՝ PPRD East ծրագրի 1ին փուլի շրջանակներում տրամադրված առաջարկությունների ընդունման առումով	Աղետների ռիսկերի կառավարման փորձագետ
12:15-12:45	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
12:45-13:15	Հեղեղումների կառավարում և համապատասխանեցում ԵՄ Հեղեղումների դիրեկտիվին	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
13:15-13:45	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
13:45-14:45	Ճաշ	
14:45-15:15	Աղետների ռիսկերի գնահատում	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
15:15-15:45	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
15:45-16:15	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների հավաքագրում և մշակում	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
16:15-16:45	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
16:45-17:00	Սուրճի ընդմիջում	
17:00-17:30	Աղետների ռիսկերի նվազեցման ներառումը հանրային ծախսերում	Կարողությունների զարգացման առանցքային փորձագետ
17:30-18:00	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
18:00-18:30	2րդ Օրվա եզրափակում	Թիմի ղեկավար ՀՀ Տարածքային կառավարման և

		արտակարգ իրավիճակների նախարարություն ԵՄ պատվիրակություն

Օր 3ՐԴ – 19 նոյեմբերի, 2015

10:00-10:15	2րդ Օրվա ամփոփում և ծանոթացում 3րդ Օրվան	Թիմի ղեկավար
10:15-10:45	Ընդունող երկրի աջակցություն	Բնակչության պաշտպանության առանցքային փորձագետ
10:45-11:15	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
11:15-11:30	Սուրճի ընդմիջում	
11:30-12:00	ԵՄ մոտեցումը կամավորությանը բնակչության պաշտպանության ոլորտում	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
12:00-12:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
12:30-13:00	Աղետների վերաբերյալ իրազեկության բարձրացում	Կարողությունների զարգացման առանցքային փորձագետ
13:00-13:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
13:30-14:30	Ճաշ	
14:30-15:00	Տվյալների և տեղեկատվության տրամադրում և INSPIRE Դիրեկտիվը	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
15:00-15:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
15:30-16:00	Տարածաշրջանային ռիսկերի էլեկտրոնային քարտեզ /ERRA/	Աղետների հետևանքով կորուստների վերաբերյալ տվյալների փորձագետ
16:00-16:30	Կլոր սեղանի շուրջ	Լիագումար նիստ
16:30-16:45	Սուրճի ընդմիջում	
16:45-17:45	Քննարկում Ազգային գերակայությունների մասին	Լիագումար նիստ
17:45-18:00	Փակման խոսք և խմբակային լուսանկար	Թիմի ղեկավար ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ԵՄ պատվիրակություն

Հավելված 2 – Մասնակիցների ցուցակ

Ազգային խորհրդատվական խմբի 2ռդ ժողով և Երկրի նկարագրի նախագծի ներկայացում

17-19 նոյեմբերի, 2015

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

N	Անուն	Կազմակերպություն/Պաշտոն	Կոնտակտային տվյալներ
	ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն		
1.	Նիկոլայ Գրիգորյան	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ	nik@emergency.am +37491-439293
2.	Հովհաննես Եմիշյան	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ պետ	hovhannes.yemishyan@mes.am +37491-201966
3.	Սոնա Հովհաննիսյան	ՀՀ ՏԿԱԻՆ արտաքին կապերի վարչություն	interdep@mes.am +37493-229922
4.	Հովհաննես Խանգելդյան	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ պետ	hovhannes.khangeldyan@mes.am +37499-779926
5.	Գագիկ Հարությունյան	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Երևանի փրկարարական վարչության օպերատիվ պլանավորման և բնակչության պաշտպանության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ	+37491-018903
6.	Տիգրան Գիդաչյան	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ աղետների հետևանքների վերացման պլանավորման, կանխատեսումների և ծրագրավորման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ	tigrangidachyan@yahoo.com +37491-280095
7.	Արտավազդ Դավթյան	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ փրկարար ուժերի վարչության պետի տեղակալ	davtyan.artavazd@gmail.com +37491- 511090
8.	Արա Ասլանյան	ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչության պետի տեղակալ	ara_aslanyan@mail.ru +37491-958270
9.	Հայկ Արամյան	ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության լրատվության բաժին	info@mes.am +37410-317720 aramyan.hayk@bk.ru
10.	Սերգեյ Հայրապետյան	ՀՀ ՏԿԱԻՆ Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության հրդեհների հաշվառման, վերլուծության և հակահրդեհային քարոզչության բաժնի պետ-ավագ տեսուչ	haysergey@mail.ru +37499-554462
11.	Լևոն Ազիզյան	ՀՀ ՏԿԱԻՆ <<Հայաստանի	armstate@meteo.am

		հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն>> ՊՈԱԿ-ի հիդրոլոգիայի կենտրոնի պետ	+37477-107107 +37410- 539566
12.	Արմեն Դաշյան	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ ՏԱ բաժնի ավագ հրահանգիչ	armen_dashyan@mail.ru +37499-166277
13.	Աշոտ Մնացականյան	«ՍՊԾ» գործակալության սեյսմիկ ռիսկի նվազեցման վարչության գլխավոր մասնագետ	ashotmn@yandex.ru +37494- 274433
14.	Էլմիրա Մարտիրոսյան	ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտների միջազգային ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ	elmirames@mail.ru +37494-798787
15.	Միքաել Սերեդա	ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ աղետների հետևանքների վերացման պլանավորման, կանխատեսումների և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ	michael.sereda@gmail.com +37494- 456795
16.	Գոհարինե Ավետյան	ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի և թարգմանության բաժնի առաջատար մասնագետ	goharineavetyan@mes.am +37410-317780
	Նախարարություններ/Գործակալություններ/Կազմակերպություններ		
17.	Միհեր Թորչյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Ռազմատնտեսական և զորահավաքային ծրագրերի վարչության պետ	mtorchyan@mineconomy.am +37411-597160; +37477-297117
18.	Գենա Գասպարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Ռազմատնտեսական և զորահավաքային ծրագրերի վարչություն	+37491-422565
19.	Էրիկ Բաղդասարյան	ՀՀ Ֆինանսների նախարարություն, Միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ	erik.baghdasaryan@minfin.am +37477-051550
20.	Սոնա Միրզոյան	ՀՀ Ֆինանսների նախարարություն, Միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժին	sona.mirzoyan@minfin.am +37411-800319
21.	Կարեն Բաբայան	ՀՀ Ֆինանսների նախարարություն, Մաքսային հսկողության վարչության դասակարգման և ոչ սակագնային կարգավորման բաժնի ավագ մաքսային տեսուչ	bka23@rambler.ru +37493-939301

22.	Հրանտ Բեգլարյան	ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ, Ազգային անվտանգության ռազմավարության իրականացման վարչության գլխավոր մասնագետ	hrantbeglaryan@yahoo.com +37477-441188
23.	Նաիրա Աղաբաբյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն Զորահավաքային բաժնի գլխավոր մասնագետ	naira_aga@yahoo.com +37499-080087
24.	Գաբրիել Թեփելիկյան	ՀՀ առողջապահության նախարարություն, Արտակարգ իրավիճակների և զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ	gabriel.tepelikyan.61@mail.ru +37410-566585 +37493-083669
25.	Արթուր Բաղդասարյան	Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության պետ	baghart@rambler.ru +37491-301607
26.	Արտակ Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի զորահավաքային բաժնի պետ	tgasparyan1983@mail.ru +37410-543713
27.	Վլադիմիր Ավետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Խորհրդական	vladavetyan@yandex.ru +37411-523778 +37499-801492
28.	Նունե Հովհաննիսյան	ՀՀ Բնապահպանության նախարարություն, Միջազգային համագործակցության վարչության միջազգային ծրագրերի կառավարման ու մոնիթորինգի բաժնի պետ	nune_h@yahoo.com +37411-818508
29.	Հայկ Հակոբյան	ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների առաջին բաժնի խորհրդական	h.hakobian@mfa.am 060 62-06-53 093 81-83-18
30.	Էդմոն Լևոնյան	ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայություն	+37491-424831
31.	Նունե Գրիգորյան	Հայկական կարմիր խաչ Լրատվության և լուսաբանման բաժնի վարիչ	nngrigoryan@gmail.com +37455-500199
32.	Արշավիր Ավագյան	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի Գեոինֆորմատիկայի Լաբորատորիայի վարիչ	avagyan@geocom.am +374 91-560177
33.	Ալեքսանդր Առաքելյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Ավագ գիտաշխատող	alex.arakelyan@outlook.com +37491-277574
34.	Աննա Էլբակյան	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտ	anushelbakyan@gmail.com +37493-712053
35.	Արա Բարսեղյան	«ԱՌՆԱՊ» հիմնադրամի տնօրենի տեղակալ	arabarseghyan@yahoo.com arnap@arnap.am +37411-241231; +37491-204704

36.	Ներսես Զալյան	ԱՌՆ Ազգային պլատֆորմ, «ԱՌՆԱՊ» հիմնադրամ	+37495-784944
37.	Մարգարիտա Մինասյան	«ԱՌՆԱՊ» հիմնադրամի տնօրենի օգնական	arnaparmenia@gmail.com +37491-132465
38.	Մերի Սարուխանյան	«ԱՌՆԱՊ» հիմնադրամ, ԱՌՆ տարածաշրջանային թիմերի կարողությունների զարգացման պատասխանատու	sarukhanyanmary93@gmail.com +37491-654445
39.	Արշակ Սարգսյան	Հայաստանի Ամերիկյան Համալսարան	arshak28@gmail.com
	Եվրամիության Պատվիրակությունը Հայաստանում		
40.	Հոա-Բինի Աջեմյան	Համագործակցության բաժնի ղեկավար	+37410-546494 21 Ֆրիկի փող. 0002 Երևան, Հայաստան
	Միջազգային կազմակերպություններ		
41.	Արմեն Չիլինգարյան	ՄԱԶԾ, Աղետներին ազգային պատրաստվածության և ռիսկերի նվազեցման կարողությունների ուժեղացման ծրագրի համակարգող	armen.chilingaryan@undp.org +37491- 011353
42.	Տիգրան Թովմասյան	UNICEF ԱՌՆ ծրագրի ղեկավար	ttovmasyan@unicef.org +37477-816646
43.	Նոռա Միրզոյան	Համաշխարհային բանկ, Քաղաքաշինության ոլորտի վերլուծաբան	nmirzoyan@worldbank.org +37410-520992 +37491-429997
	PPRD East 2 Թիմ		
44.	Սերգեյ Անագնոստի	Թիմի ղեկավար	sergej.anagnosti@pprdeast2.eu +38 095 242 16 40
45.	Մայքլ Էլմքվիսթ	Բնակչության պաշտպանության գծով հիմնական փորձագետ	michael.elmquist@pprdeast2.eu +38 095 242 16 35
46.	Անտոնին Պետր	Կարողությունների զարգացման գծով հիմնական փորձագետ	antonin.petr@pprdeast2.eu +38 095 242 08 70
47.	Մարկո Մասսաբո	Աղետների հետևանքով կորուստների տվյալների գծով փորձագետ	marco.massabo@cimafoundation.org; +39019230271
48.	Դավիդե Միոցցո	Աղետների ռիսկերի կառավարման գծով փորձագետ	davide.miozzo@cimafoundation.org +393480120070
49.	Կարինե Թասլակյան	Ծրագրի Համակարգող Հայաստանում	karat_312@yahoo.com +37491-634042